Մրցույթ՝ ՀՀ ԿԳՄՍՆ «Վանաձորի Վ. Տերյանի անվան թիվ 5 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի ՆԶՊ-ի (զինղեկ, 15 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում է առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել ՝

- դիմում (Ձև 1), մեկ լուսանկար *3 x 4 չափի,*
- *բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),*
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են **օգոստոսի 30-ից մինչև սեպտեմբերի 12-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00–15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:**

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 14–ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ ԿԳՄՍՆ Վանաձորի Վ. Տերյանի անվան թիվ 5 ավագ դպրոցում, հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Տիգրան Մեծ փակուղի 2:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (0322) 4-34-30, (093) 02-50-78 հեռախոսահամարով: